ԿՐԹՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԴՈՒ ՀԻՄՆԱՐԱՐ ԻՐԱՎՈՒՆՔ ԵՎ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԵՐԱՇԽԻՔ

(հոդվածը նվիրվում է Գավառի պետական համալսարանի հիմնադրման 30-ամյակին)

ՀՏԴ 342.7
DOI: 10.56246/18294480-2024.16-23

ՀԱԿՈԲՅԱՆ ՌՈՒԶԱՆՆԱ
Գավառի պետական համալսարանի ռեկտոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Էլփոստ՝ ruzanna.hakobyan@mail.ru

Հոդվածը վերաբերում է կրթության իրավունքի սահմանադրական և միջազգային-իրավական հիմքերին, կրթության՝ որպես մարդու իրավունքի, նաև հանրային բարիքի, անձի, հասարակության և պետության առաջընթացի երաշխիքի վերլուծությանը: Նշվում է, որ սուբյեկտիվ առումով կրթությունը մարդու ներքին պահանջն է, հետաքրքրությունների բավարարման և ինտելեկտուալ աճի միջոց, հոգևոր, գաղափարական, բարոյական, սոցիալ-մշակութային զարգացման կարևոր գործոն: Իսկ օբյեկտիվ իմաստով կրթությունը մարդկային քաղաքակրթության նվաճում է, միաժամանակ քաղաքակրթության առաջմղիչ ուժ, նորարարության աղբյուր, գիտության զարգացման գրավական, հանրային բարիք: Կրթությունը մարդու սահմանադրական իրավունքն է, որի իրացման համար ստեղծվում է հատուկ պետական համակարգ և ապահովվում է իրավական կարգավորում: Հոդվածում ներկայացվում են Հայաստանի Հանրապետությունում կրթության իրավունքի սահմանադրական հիմքերը 1995-ից 2015 թվականների սահմանադրական փոփոխությունների համատեքստում:

Առաջարկություն է արվում Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտի լիարժեք նորմատիվ իրավական կարգավորման նպատակով ՀՀ կրթական օրենսգիրք ընդունելու վերաբերյալ:

Կարևորվում է ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների կազմակերպահիրավական ձևի սահմանադրական ամրագրումը, բուհերի իրավական կարգավիճակի հստակեցումը և օրենսդրական երաշխիքներով պաշտպանությունը՝ որպես բուհի ինքնուրույն և անխափան գործունեության, ակադեմիական ազատությունների ապահովման երաշխիք:

Անհրաժեշտ է համարվում սահմանադրորեն ամրագրել ՀՀ քաղաքացիների և ազգությամբ հայ օտարերկրյա քաղաքացիների՝ Հայաստանի Հան-

ռապետությունում պետական բյուջեի միջոցների հաշվին բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու իրավունքը:

Որպես որակյալ կրթության ապահովման ուղի՝ նշվում է ուսուցման և ուսումնառության ավանդական ու արդիական, դասական և նորարարական մեթոդների ու տեխնոլոգիաների կիրառման ճանապարհը:

Բանալի բառեր՝ *կրթություն, կրթության իրավունք, կրթության սահմանադրական և միջազգային-իրավական հիմքեր, հասարակության առաջընթացի երաշխիք, հանրային բարիք, ուսումնառություն, ուսուցման մեթոդ, կրթական տեխնոլոգիա, աշխատանքահեն կրթություն, արդյունքահեն ուսուցում, կրթության իրավական կարգավորում:*

ՀՀ Սահմանադրության 3-րդ անփոփոխելի հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է[1]:

Մարդու դերակատարությունն ավելի է արժևորվում, երբ իրականացնում է բարձրագույն կրթության իրավունքը և դառնում է որակյալ մասնագետ:

ԽՍՀՄ-ի փլուզումից հետո նորանկախ Հայաստանի Հանրապետությունում տիրող համակարգային ճգնաժամի պայմաններում խիստ դժվարացել էր մայրաքաղաքում բարձրագույն կրթություն ստանալը: Ուստի ՀՀ Գեղարքունիքի մարզի (Կամոյի շրջանի) երիտասարդների բարձրագույն մասնագիտական կրթության ապահովման հրամայական անհրաժեշտության գիտակցումով փիլիսոփայական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, Հայաստանի Հանրապետության վաստակավոր մանկավարժ, Երևանի պետական համալսարանի կրոնի պատմության և տեսության ամբիոնի վարիչ, Գավառ քաղաքի պատվավոր քաղաքացի Հրանտ Խաչատուրի Հակոբյանը, դստեր՝ Հայաստանի Գերագույն Խորհրդի, ապա Ազգային Ժողովի պատգամավոր, այնուհետև ՀՀ Սփյուռքի հիմնադիր նախարար Հրանուշ Հակոբյանի հետ ձեռնամուխ եղավ իր ծննդավայրում պետական համալսարանի ստեղծմանը[2]: Նվիրյալների ջանքերով Գավառի պետական համալսարանը կայացավ և արդեն երեսուն տարի իր առաքելությունն է իրականացնում Գեղարքունյաց աշխարհում՝ սփռելով կրթության և գիտության լույսը[3]: Հրանտ Հակոբյանն առաջնորդվում էր պատմահայր Մովսես Խորենացու՝ դեռևս 5-րդ

---

[1] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723

[2] Տե՛ս Հրանտ Հակոբյան, Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից, Երևան: Երևանի համալսարանի հրատարակչություն, 2003, 272 էջ:

[3] Տե՛ս Հրանտ Հակոբյանը՝ հավերժի ճամփորդ, ‹‹Նշանավոր հայորդիներ›› մատենաշար, Գիրք Ա, Երևան: Գիր, 2014, 304 էջ:

դարում ձևակերպած երիցս ճշմարիտ բանաձևով՝ «Կրթությունը ամեն ինչ է..., անգրագիտությունը՝ մեծագույն չարիք[1]»:

Այո՛, կրթությունը ամեն ինչ է. մարդու իրավունք է, միաժամանակ՝ սոցիալական արժեք, պետական համակարգ, օրենսդրորեն կարգավորվող ուսուցման և ուսումնառության ոլորտ, մտավոր գործունեության բնագավառ:

Կրթությունը բազմաչափ հասկացություն է[2]: Այն, մարդու հիմնարար իրավունք լինելուց բացի, նաև պարտականություն է, հանրային բարիք, անձի, հասարակության և պետության առաջընթացի երաշխիք:

Կրթությունը անձի սահմանադրորեն ամրագրված իրավունքն է, ինչպես նաև բանական էակին բնորոշ կամ ներհատուկ (իմանենտ) ներքին պահանջ, գիտակցված ընտրություն, հետաքրքրությունների բավարարման, ընդունակությունների բացահայտման և զարգացման, գիտելիքների ձեռքբերման և ինտելեկտուալ աճի միջոց, սոցիալ-մշակութային առաջընթացի ճանապարհ:

Մարդկության համար կրթությունը քաղաքակրթական նվաճում է, միաժամանակ, քաղաքակրթության առաջմղիչ ուժ, նորարարության աղբյուր: Կրթությունը՝ որպես պետության սոցիալական գործառույթի կարևոր բաղկացուցիչ մաս, ուսուցման և ուսումնառության պաշտոնական գործընթաց, իրականացվում է ուսումնական հաստատությունների համակարգի միջոցով՝ նախակրթարաններից մինչև բարձրագույն ուսումնական հաստատություններ՝ իրավաբանորեն կարգավորված հարաբերությունների շրջանակներում: Պետության մեջ գործում է նորմատիվ կարգավորում ունեցող պաշտոնական («ֆորմալ») կրթական համակարգը, նաև իրականացվում են ոչ պաշտոնական («ոչ ֆորմալ», լրացական) կրթությունն ու ինքնակրթությունը («ինֆորմալ» կրթություն):

Որպես մարդու հիմնարար իրավունք՝ կրթության նպատակն է ապահովել անձի ուսուցումը, դաստիարակությունը և սոցիալականացումը՝ ինտեգրումը հասարակությանը, բազմակողմանի զարգացումը, լայն աշխարհայացքի և բարձր արժեքային համակարգի ձևավորումը, ինքնադրսևորման և ինքնաիրացման հնարավորությունների ընդլայնումը:

Մարդու իրավունք և ազատություն լինելուց բացի՝ կրթությունը հասարակության առաջընթացի երաշխիք է, հանրային բարիք, որի նպատակն է ծառայել ազգային, պետական ու համամարդկային շահերին, նպաստել գիտության զարգացմանը, բավարարել տնտեսության զարգացման պահանջները, դառնալ սոցիալական, մշակութային առաջընթացի գործոն:

---

[1] Տե՛ս Գրիգորյան Ս. Ասույթներ, Երևան:‹‹Լուսաբաց›› հրատարակչատուն, 2006, էջ 179:

[2] Տե՛ս Հակոբյան Ռ. Խ., Կրթությունը որպես բազմաչափ հասկացություն, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երևան, 2019, էջ 364-376:

Կրթությունը նաև անձի մեջ առաքինությունները ձևավորելու և զարգացնելու միջոց է: Ուստի պատահական չէ, որ հիմնադրման 30-ամյակը բոլորած և շուրջ ութ հազար շրջանավարտներ թողարկած Գավառի պետական համալսարանի համար առաջնային նպատակ է ձևավորել առաքինի մարդ, բարձր մարդկային որակներ ունեցող, ազատ մտածող և սեփական կարծիքն անկաշկանդ արտահայտող, միաժամանակ, պատասխանատու և բարեխիղճ քաղաքացի, մրցունակ մասնագետ:

Որակյալ կրթությունն է այն բանալին, որն ապահովում է արժանապատիվ և բարեկեցիկ կյանք: Կրթված անձն ունի համարժեք վերաբերմունք յուրաքանչյուր երևույթի նկատմամբ, ցանկացած իրավիճակում արագ կողմնորոշվելու, հանգամանքները վերլուծելու, գնահատելու և ճիշտ որոշումներ ընդունելու, ստեղծագործելու կարողություն, կյանքի անհրաժեշտ հմտություններ:

Անձի՝ կրթություն ստանալու իրավունքին համապատասխանում է ուսումնական հաստատության պարտականությունը՝ ապահովելու որակյալ կրթություն, ինչը ենթադրում է ուսուցիչների և դասախոսների մասնագիտական գիտելիքների ու կարողությունների, մանկավարժական վարպետության շարունակական բարձրացում, ուսուցման բովանդակության արդիականացում և հարստացում, կրթական մեթոդների բազմազանեցում, արդի տեխնոլոգիաների կիրառում, ուսումնական ռեսուրսների, ենթակառուցվածքների բարելավում, գրավիչ, մատչելի, անվտանգ ու ապահով կրթական միջավայրի ստեղծում:

Հայաստանի Հանրապետության կրթության՝ մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրի ներածությունում նշված է, որ «Որակյալ կրթության արդյունավետ միջավայրի հասանելիությունը դառնում է առանձին մարդու կարողությունների զարգացման գլխավոր հարթակը, որն իր հերթին ապահովում է կրթության՝ իբրև հանրային բարիքի իրացման երաշխիքը»[1]:

Նույն ծրագրի 76-րդ կետի համաձայն՝ «Ծրագրի վերջնական նպատակը ազգային և համամարդկային արժեքների վրա հիմնված, Հայաստանի Հանրապետության զարգացմանը միտված արդյունավետ և միջազգայնորեն մրցունակ կրթական համակարգ ձևավորելն է, որը յուրաքանչյուրին կյանքի բոլոր փուլերում հնարավորություն կտա ստանալու իր կարիքներին և ընդունակություններին համապատասխան որակյալ կրթություն, և կհանրահռչակվի կրթությունը որպես հանրային բարիք՝ ապահովելով կրթության բոլոր շահակիցների մրցունակ մասնագիտական պատրաստվածությունը, ձևավորելով ակտիվ քաղաքացիական դիրքորոշումը և մասնակցային ժողովրդավարության վրա հենվող հանրային համերաշխությունը»[2]:

---

[1] Տե՛ս https://www.irtek.am/views/act.aspx?aid=156043

[2] Նույն տեղում:

ՀՀ կրթական համակարգի գործունեության նորմատիվ իրավական հիմքերն են ՀՀ Սահմանադրությունը, կրթությանն ու գիտությանը վերաբերող միջազգային իրավական ակտերը, օրենքներն ու ենթաօրենսդրական ակտերը:

ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխում նախատեսված են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները, որոնց շարքում իր կարևոր տեղն ունի կրթության իրավունքը:

ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Պարտադիր կրթության ծրագրերը և տևողությունը սահմանվում են օրենքով: Պետական ուսումնական հաստատություններում միջնակարգ կրթությունն անվճար է:

Սահմանադրությունը նախատեսում է, որ յուրաքանչյուր ոք օրենքով սահմանված դեպքերում և կարգով ունի մրցութային հիմունքներով պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար կրթություն ստանալու իրավունք[1]:

Կրթության սահմանադրական իրավունքը ներառում է ուսումնական հաստատություն ընտրելու, դպրոց, միջին մասնագիտական, բարձրագույն և այլ ուսումնական հաստատություններ հաճախելու, կրթվելու, գիտելիքներ ստանալու, համապատասխան կրթական ծրագրերն ուսումնասիրելու և արդյունքում համապատասխան վկայական (ատեստատ, վկայագիր, հավաստագիր, դիպլոմ) ու համարժեք որակավորում ստանալու իրավազորություններ:

Դառնալով կրթական հարաբերությունների սուբյեկտ՝ անձը ձեռք է բերում համապատասխան իրավունքներ և պարտականություններ: Միաժամանակ ուսումնական հաստատությունը՝ որպես կրթական ծառայություններ մատուցող իրավաբանական անձ, պարտավոր է օրենքով սահմանված հիմքերով ու կարգով իրականացնել կրթական ծրագրեր և ստեղծել բոլոր հնարավորությունները՝ սովորողների կրթական իրավունքը պատշաճ կերպով իրացնելու, որակյալ ուսուցում և ուսումնառություն ապահովելու համար: Իսկ պետության պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունն է՝ ապահովել կրթական ոլորտի պատշաճ իրավական կարգավորում, կրթական-գիտական ոլորտներում արդյունավետ ռազմավարության իրականացում:

Մարդն ունի կրթության իրավունք, միաժամանակ՝ կրթության ազատություն[2]: Ինչպես գրում է Վ. Ե. Չիրկինը, տոտալիտար սոցիալիզմի երկրների

---

[1] ՀՀ Սահմանադրություն, 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով, Երևան, 2015:

[2] Տե՛ս Енгибарян Р. В ., Конституционное развитие в современном мире. Основные тенденции, М. , НОРМА, 2007, էջ 217-218:

սահմանադրություններում նշվում էր միայն կրթության իրավունքի մասին, սակայն անձն ունի նաև կրթության ազատություն[1]:

Մենք գտնում ենք, որ կրթության իրավունքն ու ազատությունը օրգանապես շաղկապված են, քանի որ կրթության իրավունքի իրացումը ենթադրում է ուսումնական հաստատության, մասնագիտության, ուսուցման ձևի, կրթության բովանդակության, սովորեցնելու և սովորելու մեթոդների, գիտելիքների ու արժեքների փոխանցման և արմատավորման ուղիների ազատ ընտրություն: Առանց ակադեմիական ազատությունների չի կարող խոսք լինել արդյունավետ կրթության մասին, թե՛ որպես մարդու իրավունք, թե՛ որպես հանրային արժեք:

Ինչպես նշում են Ռ. Ենգիբարյանը և Յու. Կրասնովը, «Մարդու իրավունքները սահմանադրականության հիմքն են»[2]: Համակարծիք լինելով այս դրույթին՝ միաժամանակ կարծում ենք, որ սահմանադրականության հիմք են կազմում ոչ միայն մարդու իրավունքներն ու ազատությունները, այլև դրանց որակյալ ու արդյունավետ իրացման երաշխիքներն ու կառուցակարգերը և առաջին հերթին՝ սահմանադրաիրավական կարգավորումները:

Կրթության, ինչպես և մյուս հիմնարար իրավունքների իրացման համար կիրառվում են ընդհանուր և հատուկ, ներպետական և միջազգային-իրավական երաշխիքներ[3]:

1995 թվականին հանրաքվեով ընդունված ՀՀ Սահմանադրության մեջ երեք հոդվածում՝ 11-րդ հոդվածի 2-րդ պարբերությունում, 35-րդ հոդվածում և 89-րդ հոդվածի 5-րդ կետում (ընդհանուր՝ հինգ դրույթներում), ամրագրված էին «կրթական», «կրթության իրավունք» հասկացությունները: Այսպես, Սահմանադրության 11-րդ հոդվածի երկրորդ պարբերությունում սահմանված էր, որ Հայաստանի Հանրապետությունը միջազգային իրավունքի սկզբունքների և նորմերի շրջանակներում նպաստում է այլ պետություններում գտնվող հայկական պատմական և մշակութային արժեքների պահպանմանը, աջակցում հայ կրթական և մշակութային կյանքի զարգացմանը: Իսկ 89-րդ հոդվածի 5-րդ կետում Կառավարության լիազորությունների շարքում նախատեսված էր, որ Կառավարությունը «5) ապահովում է պետական քաղաքականության իրականացումը գիտության, կրթության, մշակույթի, առողջապահության, սոցիալական ապահովության և բնության պահպանության բնագավառներում»[4]: Այսինքն՝ 89-րդ հոդվածի 5-րդ կետում կրթությունը համարվում է որպես հանրային արժեք

---

[1] Տե՛ս Чиркин В. Е., Конституционное право зарубежных стран, М., ЮРИСТЪ, 2001, էջ 92-93:

[2] Տե՛ս Енгибарян Р. В., Краснов Ю. К., Теория государства и права. Учебное пособие, 2-е издание, М., НОРМА, 2007, էջ 277:

[3] Տե՛ս Общая теория государства и права. Академический курс в 3-х томах, издание 2-е, Отв. ред. М. Н. Марченко, Т. 1, М.,ЗЕРЦАЛО-М, 2002, էջ 462-463:

[4] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docID=1:

ունեցող ոլորտ, և նախատեսվում է կառավարության պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ ապահովելու պետության քաղաքականության իրականացումը կրթության և սոցիալական նշանակության մյուս ոլորտներում: Նշված դրույթը տեղ գտավ նաև 2005 թվականին փոփոխված Սահմանադրության մեջ (հոդված 89-ի 5-րդ կետ):

Կրթության իրավունքը որպես քաղաքացու հիմնարար իրավունք, սահմանված էր 1995թ. Սահմանադրության 35-րդ հոդվածում, համաձայն որի՝ յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք:

Նախատեսված էր, որ միջնակարգ կրթությունը պետական ուսումնական հաստատություններում անվճար է:

Ամրագրված էր, որ ոչ պետական ուսումնական հաստատությունների ստեղծման և գործունեության կարգը սահմանվում է օրենքով:

ՀՀ Սահմանադրությունը չէր նախատեսում բարձրագույն ուսումնական հաստատությունների իրավական կարգավիճակը՝ ընթացիկ օրենսդրությանը թողնելով բուհերի կազմակերպաիրավական ձևերի սահմանման հարցը: Միայն ամրագրվում էր, որ յուրաքանչյուր քաղաքացի ունի պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունք:

Այսպիսով, կրթության իրավունքը ՀՀ-ում սահմանադրորեն նախատեսվում էր յուրաքանչյուր քաղաքացու համար: Միաժամանակ յուրաքանչյուր քաղաքացու համար էր նախատեսվում պետական ուսումնական հաստատություններում մրցութային հիմունքներով անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթություն ստանալու իրավունքը:

2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխությունների հետևանքով «կրթական», «կրթության իրավունք» հասկացությունները սահմանադրորեն ամրագրվեցին 6 հոդվածների (հոդվածներ 11, 27, 36, 39, 48, 89) 12 դրույթներում, և ի տարբերություն 1995 թվականի Սահմանադրության 35-րդ հոդվածի՝ 2005 թվականին փոփոխված Սահմանադրության 39-րդ հոդվածում սահմանվեց, որ ոչ թե յուրաքանչյուր քաղաքացի ունի կրթության իրավունք, այլ յուրաքանչյուր ոք: Այսպիսով, ՀՀ-ում կրթության իրավունքի սուբյեկտների շրջանակը սահմանադրորեն ընդլայնվեց՝ յուրաքանչյուր քաղաքացու փոխարեն սահմանելով յուրաքանչյուր ոք, այսինքն՝ կրթության իրավունքը դադարեց նախատեսվել որպես քաղաքացու իրավունք և դարձավ մարդու իրավունք, որը, մեր կարծիքով, ճիշտ մոտեցում է: Միաժամանակ 39-րդ հոդվածի հինգերորդ պարբերության համաձայն՝ ոչ թե յուրաքանչյուր ոք, այլ յուրաքանչյուր քաղաքացի կարող է լինել մրցութային հիմունքներով անվճար պետական բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում օրենքով սահմանված կարգով կրթություն

ստանալու իրավունքի սուբյեկտ: Համամիտ ենք այսպիսի սահմանման հետ, քանի որ ՀՀ պետական բյուջեի միջոցների հաշվին պետք է սովորեն հենց Հայաստանի Հանրապետության քաղաքացիները: Կարծում ենք նաև, որ անհրաժեշտ է սահմանադրորեն ամրագրել ինչպես ՀՀ, այնպես էլ ազգությամբ հայ օտարերկրյա քաղաքացիների՝ Հայաստանի Հանրապետությունում պետական բյուջեի միջոցների հաշվին բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու իրավունքը, մանավանդ որ Սփյուռքի հայկական դպրոցների ուսուցիչների պատրաստման համար պետական բյուջեի միջոցների հաշվին տարեկան 70 տեղ է հատկացվում: Ազգությամբ հայերի կրթության իրավունքը սահմանադրական նորմի աստիճանի բարձրացնելով՝ կավելանա սփյուռքահայերի թիվը ՀՀ բուհերում, կամրապնդվեն Հայրենիք-Սփյուռք կապերը և կնպաստի հայրենադարձության խթանմանը[1]:

Սահմանադրության 36-րդ հոդվածն ամրագրեց ծնողների իրավունքը և միաժամանակ պարտավորությունը, այսինքն՝ պարտավորեցնող իրավունքը՝ հոգ տանելու իրենց երեխաների դաստիարակության, առողջության, լիարժեք ու ներդաշնակ զարգացման և կրթության համար:

2005 թվականի փոփոխությունների արդյունքում Սահմանադրության մեջ կրթությունը դարձյալ դիտարկվեց որպես անձի հիմնարար իրավունք և հանրային արժեք: Մասնավորապես 27-րդ հոդվածի վերջին պարբերությամբ նախատեսվեց, որ պետությունը երաշխավորում է տեղեկատվական, կրթական, մշակութային և ժամանցային բնույթի հաղորդումների բազմազանություն առաջարկող անկախ հանրային ռադիոյի և հեռուստատեսության առկայությունը և գործունեությունը, կամ Սահմանադրության 48-րդ հոդվածի 8-րդ կետում տնտեսական, սոցիալական և մշակութային ոլորտներում պետության հիմնական խնդիրների շարքում նախատեսվեց պետության պոզիտիվ պարտականությունը՝ նպաստելու անվճար բարձրագույն և այլ մասնագիտական կրթության զարգացմանը:

2015 թվականի փոփոխությունների հետևանքով, որպես հիմնարար իրավունք և հանրային բարիք, կրթությունը, ինչպես նաև կրթական ցենզը Սահմանադրության 16 հոդվածում նախատեսվեց 25 անգամ (հոդվածներ 15, 19, 36, 38, 42, 86, 95, 164, 165, 177, 192, 195, 196, 197, 199, 201)՝ որպես հոդվածների նորմատիվ բովանդակության բաղադրիչներ և երկու հոդվածի վերնագրերի մաս: Սակայն թե՛ 2005 և թե՛ 2015 թվականների սահմանադրական փոփոխությունների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում այդպես էլ սահմա-

[1] Հայրենիք-Սփյուռք կապերի և համագործակցության մասին մանրամասն տե՛ս Հրանուշ Հակոբյան, Հայրենիք-Սփյուռք գործակցության տասնամյա ուղին (2008-2018թթ.), երեք հատորով, Հատոր 1-ին (գիրք Ա), Երևան, «Տիգրան Մեծ», 2023, 684 էջ, Հատոր 2-րդ (գիրք Բ), Երևան, «Տիգրան Մեծ», 2023, 681 էջ, Հատոր 3-րդ (գիրք Գ), «Տիգրան Մեծ», Երևան, 2024, 644 էջ:

նադրորեն չլուծվեց բարձրագույն ուսումնական հաստատությունների կազմակերպաիրավական ձևի հարցը[1]:

Խնդիրն այն է, որ բուհերի կարգավիճակն իրավական կարգավորման ամենաբարձր մակարդակում Սահմանադրությամբ չամրագրելը և չհստակեցնելը խոցելի է դարձնում բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ վտանգելով նրանց ինքնուրույնությունը, թեև ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ «Բարձրագույն ուսումնական հաստատություններն օրենքով սահմանված շրջանակներում ունեն ինքնակառավարման իրավունք, ներառյալ ակադեմիական և հետազոտությունների ազատությունը»[2]:

Գործող Սահմանադրության 38-րդ հոդվածում սահմանվում է կրթության իրավունքը յուրաքանչյուրի համար, ինչպես նաև նախատեսվում է, որ յուրաքանչյուր ոք ունի մրցութային հիմունքներով բարձրագույն և այլ մասնագիտական կրթական հաստատություններում անվճար սովորելու իրավունք[3]:

Ռուսաստանի Դաշնության Սահմանադրության 43-րդ հոդվածում[4] ևս յուրաքանչյուր անհատի համար է սահմանված կրթության իրավունքը և պետական կամ մունիցիպալ կրթական հաստատությունում անվճար բարձրագույն կրթություն ստանալու իրավունքը: Իսկ 114-րդ հոդվածի 1-ին մասի գ) կետում նախատեսված է ՌԴ կառավարության պոզիտիվ սահմանադրական պատասխանատվությունը՝ ապահովելու միասնական պետական քաղաքականության իրականացումը մշակույթի, գիտության, կրթության, առողջապահության, սոցիալական ապահովության, բնապահպանության ոլորտներում[5]:

Հատկանշական է, որ 2015 թվականի փոփոխությունների արդյունքում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեջ ամրագրվեց նոր սկզբունք հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ դրույթների էության անխախտելիության մասին, որի համաձայն՝ «Հիմնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ սույն գլխում ամրագրված դրույթների էությունն անխախտելի է»[6]: Հիմնական իրավունքի էության անխախտելիության մասին նույնաբովանդակ նորմ-սկզբունք ամրագրված է Գերմանիայի Դաշնային Հանրա-

---

[1] Այս մասին մանրամասն տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ՝ 2005 թվականի փոփոխություններով, Սահմանադրության 39-րդ հոդվածի մեկնաբանություն, Գ. Բալայան, Ա. Վաղարշյան, Ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010, էջ 464-474:

[2] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723:

[3] Տե՛ս ՀՀ Սահմանադրության հոդված 38-ի 2-րդ և 3-րդ մասեր, 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով, Երևան, 2015:

[4] Տե՛ս Конституция РФ // http://www.constitution.ru/10003000/10003000-4.htm

[5] Նույն տեղում:

[6] Տե՛ս 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխություններով ՀՀ Սահմանադրության հոդված 80:

պետության հիմնական օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ մասում[1]: Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ ՀՀ Սահմանադրության 2-րդ գլխի 38-րդ հոդվածում ամրագրված կրթության իրավունքի մասին դրույթներն իրենց էությամբ անխախտելի են, և պետությունը պարտավոր է ապահովել երաշխիքներ՝ դրանց լիարժեք և որակյալ իրականացման համար:

Կրթության իրավունքի ներպետական սահմանադրական ամրագրումն ունի միջազգային իրավական հիմքեր: Միջազգային իրավական առումով կրթության իրավունքն ամրագրված է թե՛ ընդհանրապես մարդու հիմնական իրավունքներին վերաբերող միջազգային իրավական ակտերում, թե՛ հենց կրթությանը նվիրված միջազգային փաստաթղթերում՝ Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրում[2], Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագրում[3], Տեխնիկական և մասնագիտական կրթության մասին կոնվենցիայում[4], Երեխայի իրավունքների մասին կոնվենցիայում[5], Եվրոպական տարածաշրջանում բարձրագույն կրթությանը վերաբերող որակավորումների ճանաչման մասին կոնվենցիայում[6], այլ ակտերում: ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովի կողմից 1948 թվականի դեկտեմբերի 10-ին ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագրի 26-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք: Առնվազն տարրական և ընդհանուր կրթությունը պետք է լինի անվճար: Տարրական կրթությունը պետք է լինի պարտադիր: Տեխնիկական և մասնագիտական կրթությունը պետք է հանրամատչելի լինի, իսկ բարձրագույն կրթությունը՝ հավասարապես մատչելի բոլորի համար՝ յուրաքանչյուրի ընդունակություններին համապատասխան:

Հռչակագրում ամրագրված է, որ կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատականության լիակատար զարգացմանը և մարդու իրավունքների ու հիմնական ազատությունների նկատմամբ հարգանքի մեծացմանը: Կրթությունը կոչված է նպաստելու փոխըմբռնմանը, հանդուրժողականությանը, բոլոր ժողովուրդների, ռասայական և կրոնական խմբերի միջև բարեկամությանը և պիտի նպաստի Միավորված ազգերի՝ խաղաղության պահպանմանն ուղղված գործունեությանը:

---

[1] Основной закон Федеративной Республики Германии // https://www.1000dokumente.de/?c=dokument_de&dokument=0014_gru&l=ru&object=translation

[2] Տե՛ս https://www.irtek.am/views/act.aspx?aid=37342:

[3] Տե՛ս https://www.irtek.am/views/act.aspx?aid=37347:

[4] Տե՛ս https://unevoc.unesco.org/fileadmin/user_upload/pubs/conv-r.pdf

[5] Տե՛ս http://www.parliament.am/library/MAKkonvencianer/10.pdf

[6] Տե՛ս https://www.irtek.am/views/act.aspx?aid=28083

Միաժամանակ, նախատեսված է ծնողների առաջնային իրավունքն իրենց մանկահասակ երեխաների համար կրթատեսակ ընտրելու գործում[1]:

Հռչակագրի 26-րդ հոդվածը ներառում է կրթության՝ որպես մարդու հիմնարար իրավունքի մասին դրույթ, իսկ ՄԱԿ-ի գլխավոր վեհաժողովը հռչակագրի նախաբանում կարևորում է կրթությունը որպես հանրային արժեք, որն ունի համամարդկային նշանակություն՝ սահմանելով, որ յուրաքանչյուր մարդ ու հասարակության յուրաքանչյուր մարմին պետք է ձգտի լուսավորության ու կրթության միջոցով օժանդակելու մարդու իրավունքների ու ազատությունների հարգելուն և ազգային ու միջազգային առաջադիմական միջոցառումների միջոցով դրանց համընդհանուր և արդյունավետ ճանաչման ու իրականացման ապահովմանը ինչպես ՄԱԿ-ի անդամ պետությունների, այնպես էլ նրանց իրավասության տակ գտնվող տարածքներում ապրող ժողովուրդների միջև[2]:

ՄԱԿ-ի՝ Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիրը[3] 13-րդ հոդվածի 1-ին մասում սահմանում է Դաշնագրի մասնակից պետությունների պոզիտիվ պարտականությունը՝ ճանաչելու յուրաքանչյուրի կրթության իրավունքը: Պետությունները համաձայնում են, որ կրթությունը պետք է ուղղված լինի մարդկային անհատի և նրա արժանապատվության գիտակցման լիակատար զարգացմանը և պետք է ամրապնդի հարգանքը մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների նկատմամբ: Մասնակից պետություններն այնուհետև համաձայնում են, որ կրթությունը բոլորին պետք է հնարավորություն ընձեռի արդյունավետ մասնակցություն ունենալու ազատ հասարակությանը, նպաստելու բոլոր ազգերի և ռասսայական, էթնիկական կամ կրոնական բոլոր խմբերի միջև փոխըմբռնմանը, հանդուրժողականությանն ու բարեկամությանը և աջակցելու խաղաղության պահպանման ուղղությամբ Միավորված ազգերի կազմակերպության գործունեությանը[4]: Թեև նման միջազգային իրավական սահմանումներին՝ արդի աշխարհում կրթությունը, գիտությունը, մշակույթը, ինչպես նաև այլ համամարդկային արժեքներ, ցավոք, չեն ծառայում հանդուրժողականության և խաղաղության ապահովման գործին, ընդհակառակը՝ մեծապես տուժում են արտակարգ և ռազմական դրության պայմաններում:

Արցախյան հայտնի իրադարձությունները, Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղի բնակչության բռնի տեղահանումը պատմական հայրենիքից վկայում են ՄԱԿ-ի ձևավորած անվտանգության համակարգի ճգնաժամի մասին: Կոպ-

---

[1] Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docID=1896

[2] Նույն տեղում:

[3] Նշված դաշնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1993 թվականի դեկտեմբերի 13-ից:

[4] Տե՛ս https://www.irtek.am/views/act.aspx?aid=37347:

տորեն խախտվեցին միջազգային մարդասիրական իրավունքի հիմնարար նորմերն ու սկզբունքները, ոտնահարվեցին հազարավոր մարդկանց կյանքի, առողջության պահպանման, արժանապատվության և իրավունքների հարգման, կրթության, ազատ տեղաշարժի, սոցիալական ապահովության և բազում այլ իրավունքներ ու ազատություններ:

Պատերազմների հետևանքով ողջ աշխարհում բազում երիտասարդներ զրկվում են կրթության իրավունքից, որը հումանիտար լուրջ խնդիր է և միջազգային հանրության ջանքերով պատշաճ լուծում է պահանջում՝ անվտանգ և խաղաղ պայմաններում ապահովելու աճող սերնդի կրթության իրավունքը:

Երրորդ հազարամյակը բնութագրվում է արհեստական բանականության սրընթաց զարգացմամբ, որն անխուսափելիորեն ուղեկցվում է հասարակական կենսագործունեության տարբեր ոլորտների, այդ թվում՝ կրթության առջև ծառացած լուրջ մարտահրավերներով, և կրթական համակարգի որակական փոխակերպման պահանջ է առաջադրվում: Այդ փոխակերպումն իրականացնելու համար պետք է հաշվի առնել թվային դարաշրջանի սերնդի կրթության առանձնահատկությունները: Ժամանակակից սերնդին ուսուցման ավանդական մեթոդներով դասավանդելը բավարար չէ, և հարկ է նորարարական տեխնոլոգիաների ներդրում կրթության ոլորտում: Անհրաժեշտ է կիրառել իրական և վիրտուալ ռեժիմներում ուսուցման կազմակերպման մեթոդներ, կրթական իմերսիվ՝ «ընկղմվող» տեխնոլոգիաներ[1]: Նշված տեխնոլոգիաներով կրթությունը կազմակերպելիս զուգակցվում են առկա իրական և վիրտուալ գործիքները թվային միջավայրում, և համադրված իրականությունում սովորողը հայտնվում է իր համար հետաքրքիր պայմաններում և յուրացնում անհրաժեշտ նյութը: Ուսուցանողից պահանջվում է հետաքրքրել սովորողներին, խնդրո առարկան թարգմանել էմոցիաների և պատկերների լեզվով և այդ կերպ գիտելիքը հաղորդել կրթության սուբյեկտին:

Կարևորվում է նաև աշխատանքահեն և արդյունքահեն ուսուցման կազմակերպումը՝ որպես կրթության արդյունավետ եղանակ, երբ սովորելու և աշխատելու գործընթացները ժամանակային առումով միմյանցից անջատված չեն, այլ զուգակցված են: Այդ դեպքում կրթությունը լինում է առարկայական, հասկանալի և օգտակար, իսկ աշխատանքը՝ առավել իմաստավորված և նպատակային: Աշխատանքը օգնում է առավել լավ ըմբռնել այն ամենը, ինչ սովորում է ուսանողը, իսկ իր հերթին կրթությամբ ձեռք բերված գիտելիքը աշխատանքը դարձնում է հասկանալի ու հետաքրքիր, ինչպես նաև աշխատանքի ընթացքում՝

[1] Տե՛ս https://www.it-world.ru/tech/technology/201797.html:

իրական ռեժիմում, հետազոտություն կատարելու և նորարարական առաջարկություններ ներկայացնելու հնարավորություն է ստեղծվում:

2020 թվականին Երկիր մոլորակը գալարվեց նոր կորոնավիրուս (COVID-19) համավարակի ճանկերում, մարդիկ հարկադրված եղան մեկուսանալ՝ դադարեցնելով ակտիվ սոցիալական կենսագործունեությունը, և այդ պայմաններում կրթության համակարգի համար փրկօղակ հանդիսացավ առցանց՝ հեռավար կրթությունը: Մեր կարծիքով՝ հետհամավարակային Հայաստանի կրթության ոլորտի զարգացման գերակա ուղղություններից են առցանց՝ հեռավար կրթության օրենսդրական հիմքերի ամբողջական ապահովումը, անհրաժեշտ ենթակառուցվածքների ստեղծումն ու ծրագրային սպասարկումը, ուսանողակենտրոն, աշխատանքահեն ուսուցման կազմակերպումը, արհեստական բանականության գործիքների կիրառումը, որոնք պետք է դառնան բուհի ակադեմիական ազատության և ինքնավար գործունեության բաղկացուցիչը: ՀՀ բարձրագույն կրթության համակարգի համար կարևոր են եվրոպական կրթական և գիտական տարածքին ինտեգրումը, որպես գերակա խնդիրներ՝ «Բաց գիտություն» հայեցակարգի ներդրումը, ուսումնական էլեկտրոնային պաշարների շարունակական համալրումը, թվային տեխնոլոգիաների հնարավորությունների նպատակային օգտագործումը:

Ակնհայտ է, որ համալսարանական որակյալ կրթության հիմքը հանրակրթությունն է, տասներկու տարի սովորողին բարձրագույն մասնագիտական կրթությանը նախապատրաստելը: Չանդրադառնալով հանրակրթության հիմնախնդիրներին՝ նշենք, որ դպրոցական կրթության բարեփոխումները խիստ արդիական են և փոխկապակցված բարձրագույն կրթության իրավունքի և դրա իրականացման կառուցակարգերի հետ: Հետևաբար կրթության իրավունքի իրականացման միասնական նորմատիվ իրավական հիմքերի մշակումը և կիրառումը օրախնդիր է:

Ուստի առաջարկում ենք.

1. Հայաստանի Հանրապետության կրթության ոլորտը կարգավորող բոլոր օրենսդրական ակտերի վերանայում, համակարգում և մեկտեղում ՀՀ կրթական օրենսգրքում, այսինքն՝ կրթական օրենսդրության կոդիֆիկացիայի իրականացում՝ այդպիսով ապահովելով կրթության՝ որպես մարդու սահմանադրական իրավունքի իրականացման, հասարակության առաջընթացի երաշխիք հանդիսացող համակարգի լիարժեք և արդյունավետ զարգացման, ինչպես նաև բուհերի գործունեության համար անհրաժեշտ ու ամբողջական օրենսդրական հիմք,

2.ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների կազմակերպաիրավական ձևի սահմանադրական ամրագրում, բուհերի իրավական կարգա-

վիճակի հստակեցում և սահմանադրական երաշխիքներով պաշտպանություն՝ որպես բուհի ինքնուրույն գործունեության երաշխիք,

3.Հայաստանի Հանրապետության քաղաքացիների և ազգությամբ հայ օտարերկյա քաղաքացիների՝ ՀՀ-ում պետական բյուջեի միջոցների հաշվին բարձրագույն մասնագիտական կրթություն ստանալու իրավունքի ամրագրում ՀՀ Սահմանադրության 38-րդ հոդվածում,

4.կրթության կազմակերպման նոր կառուցակարգերի մշակում և գործարկում, ուսուցման և ուսումնառության ավանդական և արդիական, դասական ու նորարարական մեթոդների, անցանց և առցանց կրթության, զուգակցված տեխնոլոգիաների, արհեստական բանականության ընձեռած հնարավորությունների խելամիտ կիրառում՝ աճող սերնդի որակյալ կրթության հույժ կարևոր հանձնառությունը լավագույնս իրականացնելու համար:

Օգտագործված գրականության ցանկ

1. **ՀՀ Սահմանադրություն**, 2015թ. դեկտեմբերի 6-ի փոփոխություններով, Երևան, 2015:

2. **Конституция РФ** // http://www.constitution.ru/10003000/10003000-4.htm.

3.**Основной закон Федеративной Республики Германии** // https://www.1000dokumente.de/?c=dokument_de&dokument=0014_gru&l=ru&object=translation.

4.**Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ**՝ 2005 թվականի փոփոխություններով Սահմանադրության 39-րդ հոդվածի մեկնաբանություն, Գ. Բալայան, Ա. Վաղարշյան, Ընդհանուր խմբագրությամբ Գ. Հարությունյանի, Ա. Վաղարշյանի, Երևան, «Իրավունք», 2010, էջ 464-474:

5. **Գրիգորյան Ս.,** Ասույթներ, Երևան, «Լուսաբաց» հրատարակչատուն, 2006, էջ 179:

6. **Հակոբյան Հր.**, Էջեր Գավառի պետական համալսարանի հիմնադրման պատմությունից, Երևանի համալսարանի հրատարակչություն, Երևան, 2003, 272 էջ:

7.**Հրանտ Հակոբյանը՝ հավերժի ճամփորդ**, «Նշանավոր հայորդիներ» մատենաշար, Գիրք Ա, Երևան, «Գիր», 2014, 304 էջ:

8.**Հակոբյան Հ.**, Հայրենիք-Սփյուռք գործակցության տասնամյա ուղին (2008-2018թթ.), եռահատորյակ, Հատոր 1-ին (Գիրք Ա), Երևան: Տիգրան Մեծ,

2023, 684 էջ, Հատոր 2-րդ (Գիրք Բ), 2023, 681 էջ, Հատոր 3-րդ (Գիրք Գ), Երևան: Տիգրան Մեծ, 2024, 644 էջ:

9. **Հակոբյան Ռ.**, Կրթությունը որպես բազմաչափ հասկացություն, Գավառի պետական համալսարանի գիտական հոդվածների ժողովածու, թիվ 6, Երևան, 2019, էջ 364-376:

10. **Енгибарян Р. В.,** Конституционное развитие в современном мире. Основные тенденции, М., НОРМА, 2007, էջ 217-218:

11. **Енгибарян Р. В., Краснов Ю. К.,** Теория государства и права. Учебное пособие, 2-е издание, М., НОРМА, 2007, էջ 277:

12. **Чиркин В. Е.**, Конституционное право зарубежных стран, М., ЮРИСТЪ, 2001, էջ 92-93:

13. **Общая теория государства и права**, Академический курс в 3-х томах, издание 2-е, Отв. ред. М. Н. Марченко, т.1, М.,ЗЕРЦАЛО-М, 2002, էջ 462-463:

Համացանցային աղբյուրներ

1. https://www.arlis.am/documentview.aspx?docID=1
2. https://www.arlis.am/documentview.aspx?docID=143723
3. https://www.irtek.am/views/act.aspx?aid=37342
4. https://www.irtek.am/views/act.aspx?aid=37347
5. https://www.irtek.am/views/act.aspx?aid=156043
6. https://unevoc.unesco.org/fileadmin/user_upload/pubs/conv-r.pdf
7. http://www.parliament.am/library/MAKkonvencianer/10.pdf
8. https://www.irtek.am/views/act.aspx?aid=28083
9. https://www.arlis.am/documentview.aspx?docID=1896
10. https://www.it-world.ru/tech/technology/201797.html

EDUCATION AS A FUNDAMENTAL HUMAN RIGHT AND GUARANTEE FOR SOCIETY PROGRESS

The article is dedicated to the 30th anniversary of foundation of Gavar State University

HAKOBYAN RUZANNA
Rector of Gavar State University,
Doctor of Law, Associate Professor
e-mail: ruzanna.hakobyan@mail.ru

The article refers to the constitutional and international-legal foundations of the right to education, the analysis of education as a guarantee for human rights, as well as a of public good, progress of the person, society and the state. It is noted that subjectively, education is an internal requirement of a person, a means of satisfying his interests and intellectual growth, an important factor of spiritual, ideological, moral and socio-cultural development. Meanwhile, in an objective sense, education is an achievement of human civilization, and at the same time, a driving force for civilization, a source of innovation, a pledge of the development of science, a public good. Education is a constitutional human right, for the realization of which a special state system is created and its legal regulation is ensured. The constitutional foundations of the right to education in the Republic of Armenia are presented in the context of the constitutional amendments from 1995 to 2015.

This work proposes to adopt an Education Code for the purpose of full normative legal regulation of the education sector of the Republic of Armenia.

The work highlights the importance of constitutional fixation of the organizational legal form of the Armenian higher education institutions, clarification of the legal status of universities and its protection by legislative guarantees as a pledge for an independent and uninterrupted operation of the university. It is considered necessary to constitutionally enshrine the right of the Armenian citizens and foreign citizens of Armenian nationality to receive higher professional education at the expense of the state budget in the Republic of Armenia. The way of using traditional and modern, classic and innovative methods and technologies of teaching and learning is indicated as a means to ensure quality education.

Keywords: *education, right to education, constitutional and international-legal foundations of education, public good, learning, teaching method, educational*

technology, work-based education, outcome-based learning, legal regulation of education.

ОБРАЗОВАНИЕ КАК ФУНДАМЕНТАЛЬНОЕ ПРАВО ЧЕЛОВЕКА И ГАРАНТИЯ ПРОГРЕССА ОБЩЕСТВА

Статья посвящена 30-летию основания Гаварского государственного университета.

АКОБЯН РУЗАННА

Ректор Гаварского государственного университета

Доктор юридических наук, доцент

электронная почта: ruzanna.hakobyan@mail.ru

В статье представлены конституционные и международно-правовые основы права на образование, анализируется образование как право человека, а также гарантия общественного прогресса. Отмечается, что в субъективном смысле образование является внутренней потребностью человека, средством удовлетворения интересов и интеллектуального роста, важным фактором духовного, мировоззренческого, нравственного, социокультурного развития личности. А в объективном смысле образование является достижением человеческой цивилизации, одновременно движущей силой цивилизации, источником инноваций, залогом развития науки, общественным благом. Образование является конституционным правом человека, для реализации которого создается специальная государственная система и обеспечивается правовое регулирование. Конституционные основы права на образование в Республике Армения представлены в контексте конституционных изменений 1995-2015 годов.

Вносится предложение относительно принятия Кодекса об образовании РА с целью полноценного нормативно-правового регулирования сферы образования Республики Армения. В качестве гарантии независимой и продуктивной деятельности вузов, предлагается в Конституции закрепить организационно-правовую форму высших учебных заведений РА, уточнить их правовой статус и на законодательном уровне гарантировать защиту академической свободы и права на самоуправление. Предлагается также конституционно закрепить право граждан РА и иностранных граждан армянской национальности на получение высшего профессионального образования за счет государственного бюджета Республики Армения. В заключении указан путь использования традиционных и

современных, классических и инновационных методов и технологий преподавания и обучения как способ обеспечения качественного образования.

Ключевые слова: *образование, право на образование, конституционные и международно-правовые основы образования, общественный прогресс, метод обучения, образовательная технология, обучение на основе работы, обучение, ориентированное на конечный результат, правовое регулирование образования.*

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 14.02.2024թ.:
Հոդվածը գրախոսվել է 24.02.2024թ.:
Ընդունվել է տպագրության 17.05.2024թ.: